

**ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

ИСТОЧНИКОВЕДЕНИЕ И ФИЛОЛОГИЯ

SOURCE STUDY AND PHILOLOGY

ՔԱՂՐԹԱԿԱՆՔ - ԱՐԱԲՆԵՐԻ ԱՆՎԱՆ ՄԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ*

ՀԱՅԿԱԶ ԳԵՎՈՐԳՅԱՆ

**Բանալի բառեր՝ քաղրթականք, Քաղիրթ, ցեղանուն,
արաբ, հայ մատենագրություն, Խալիդ, անձնանուն:**

Հայ մատենագրության մեջ արաբների վերաբերյալ կիրառվող Քաղրթականք անվանումը, ի տարբերություն արաբների համար գործածելի ավանդական անվանումների (արաբ, տաճիկ, սառակինոս, իսմայելացի, հագարացի և այս ձևերից կազմված բարդություններ), լայն կիրառություն չունի և հանդիպում է միայն մեկ կոնտեքստում՝ իսլամի ծագման վաղ շրջանի և Մուհամեդի մասին պատմող հատվածում: Տարբեր մատենագիրների մոտ հանդիպող այդ նույն կոնտեքստը, փաստորեն, հուշում է դրանց միջև գոյություն ունեցող աղբյուրագիտական ընդհանուր կապի մասին, որոնք ի վերջո հանգում են մեկ ընդհանուր սկզբնաղբյուրի: Այս անվան առաջին վկայությունները վերաբերում են XII դարին պատկանող երկու երկերի՝ «Քարթլիս Ցխովրեբայի» հին հայերեն թարգմանություն-խմբագրություն և Սամվել Անեցու «Ժամանակագրություն»:

Պատմաբանասիրական քննությունը ցույց է տալիս, որ Քաղրթականք անվան առաջին բաղադրիչը՝ Քաղըրթ, Քաղիրթ կամ Քաղարթ նույնանում է արաբական Խալիդ անվան հետ:

* Հոդվածը ներկայացվել է 21.11.2020: Գրախոսվել է 27.11.2020:

Սույն հոդվածում կատարելով աղբյուրագիտական քննություն, հաշվի առնելով այս անվան վերաբերյալ առկա մեկնաբանությունները և համեմատելով Քաղիրթ անունը հայերեն համանուն մյուս բառերի հետ՝ ցույց ենք տալիս խալիդ < Քաղիրթ համապատասխանությունը, որ արդյունք է ասորերենից հայերեն կատարված յուրօրինակ տառադարձության: Ըստ այդմ, արաբական խալիդ անունը հայերեն է ներթափանցել ներկայումս ոչ հայտնի ասորական մի աղբյուրից հավանաբար XII դարում:

Հայ մատենագրության մեջ արաբների վերաբերյալ կիրառվող ավանդական անվանումներից զատ (արաբ, տաճիկ, սառակինոս, իսմայելացի, հագարացի), վկայվում է ևս մեկ անվանում՝ քաղորթականք (քաղորթալեզուք, քաղորթաշուրթն ժողովուրդ, քաղորթաց ազգ, ժողովուրդ): Այս վերջին ձևը, սակայն, ի տարբերություն մնացած անվանումների՝ չունի լայն տարածում և հիշատակվում է միայն իսլամի ծագման վաղ շրջանի և Մուհամեդի մասին պատմող հատվածում: Այս անվանաձևի առաջին վկայությունները վերաբերում են XII դարին պատկանող երկու երկերի՝ «Քարթլիս Յխոփեբայի» հին հայերեն թարգմանություն-խմբագրություն և Սամվել Անեցու «Ժամանակագրություն»: Ի. Աբուլաճեն ցույց է տալիս, որ «Պատմություն Վրաց» անունով հայտնի «Քարթլիս Յխոփեբայի» հին հայերեն թարգմանությունը վրացերենից հայերեն փոխադրված պիտի լինի XII դարի երկրորդ կեսին⁹³, մինչդեռ վրացերեն բնագրի

¹ Աբուլաճեն 1941, 37:

պահպանված ամենավաղ օրինակը վերաբերում է XV դարի վերջերին⁹⁴: «Պատմության» ԺԶ գլխուղ հեղինակը սկսում է VII դարի սկզբներին իսլամի տարածման սկզբնական շրջանում մուսուլմանների կողմից քրիստոնյաների նկատմամբ իրականացված դաժանությունների նկարագրությամբ՝ նշելով, որ մի որոշ ժամանակ *սառակինոսները* (իմա՝ արաբները) կոչվեցին *քաղթականներ*, քանի որ նրանց հզորացման սկիզբը կապվում է *Քաղթ/Քաղարթ* իշխանի անվան հետ. «*Բայց ոչ ոք կարելի չէր քրիստոնէից ընդ գրով արկանել՝ զոր կրեցին ի Սարակինոսացն, որք առժամանակ մի և Քաղթականք կոչեցան. զոր ասէ իսկ աստուածային Գիրք, եթէ Քաղթայ լեզուքն արբեցցին յարենէ՝ անմեղաց: Քանզի սկիզբն զօրանալոյ ազգին Քաղթն եղև, որ էր իշխան սական Իսմայելականաց շրջաբնակաց*»⁹⁵: Կարևոր է նշել, որ «Քարթլիս Յիսուկերայի» վրացերեն բնագրում տվյալ հատվածը բացակայում է, ուստի, ամենայն հավանականությամբ, այն ներմուծվել է հայերեն տեքստի խմբագրի կողմից⁹⁶: Մյուս աղբյուրում՝ Սամվել Անեցու «Ժամանակագրության» մեջ համապատասխան հատվածը հետևյալն է, հմմտ. «*Աստանաւոր նստի գլուխ ազգին Իսմայէլի նախ Քաղարթ անուն, զոր եւ Գիրն աստուածային պատմէ, թէ քաղարթաշուրթն ժողովուրդն յազեցուցեն զսուրս իրեանց յարենէ*»⁹⁷: Եթե «Պատմութիւն Վրաց»-ում *Քաղթ* անվան դիմաց ունենք

⁹² Thomson 1996: XXXVIII.

⁹³ Համառօտ Պատմութիւն Վրաց 1884, 102:

⁹⁴ Աբուլաճե 1941, 36-37:

⁹⁵ Սամուէլ Անեցի 2011, 100:

Քաղրթայ լեզուքն, ապա Ս. Անեցու մոտ քաղարթաշուրթն ժողովուրդ արտահայտությունն է վկայվում: Ի. Արուածեն «Պատմություն Վրաց»-ի վերաբերյալ իր ուսումնասիրությունում մեջբերում է մի շարք դրվագներ, որոնք բացակայում են վրաց բնագրում և, ընդհակառակը, առկա են հայերեն թարգմանության մեջ և ազդված են այլ հայ մատենագիրներից՝ ցույց տալով, որ «Քարթլիս Յիսուկերայի» հայերեն թարգմանության հեղինակը հայ է և քաջածանոթ է հայերեն պատմական գրականությանը: Նա նշում է, որ Մահմետի երևալու մասին այս պատմությունը նույնպես հայկական աղբյուրներից է վերցված և շատ նման է Սամվել Անեցու ու Մխիթար Անեցու պատմածներին⁹⁸:

Սամվել Անեցու կրտսեր ժամանակակից Մխիթար Անեցին (XII-XIII դդ.) Քաղրթի մասին պատմվող հատվածում գրում է. *«Առաջին ելանէ զար յիսմայէլացոց, ունելով զլուխ և առաջնորդ զՔաղրթ ոմն»*⁹⁹: Ակնհայտ է, որ Մխիթար Անեցին, այս հատվածը շարադրելիս օգտվել է իր համաքաղաքացի Սամվել Անեցու երկից: Թեև շարունակության մեջ բացակայում են աստվածաշնչյան տողերը, սակայն վերջինիս մոտ Սամվել Անեցու ազդեցությունը նկատելի է նաև հետևյալ հատվածում, հմմտ.

⁹⁸ Արուածեն 1941, 36:

⁹⁹ Մխիթար Անեցի 1983, 103:

Սամվել Անեցի	Մխիթար Անեցի
Բայց հասեալ Քրդըրթ ի Դամասկոս Միջագետաց եւ մինչեւ ի քաղաքն Ամիթ խանձեալ բազում աւարաւ: Ապա երիս սպայս մի ի Հոռն արձակէ Յազ անուն եւ խրապորու Յովել, որք կոտորեցին ի Հոռոմոց Հ հազար...եւ տիրեցին բոլոր աշխարհիս Հայոց, Պարսից եւ Ասորոց, Եգիպտացոց, Մարաց եւ Պարթեաց եւ Պաղեստինացոց:» (Էջ 100):	«Բայց հասեալ Քաղորթի ի Դամասկոս Միջագետաց, մինչև քաղաքն Ամիթ և արձակէ երիս գլխատու. մի՛ ի կողմանս Հոռոմոց՝ Յազու, որոյ խրապոյիչ ասեն զՅովէլ ոմն, որք կոտորեցին ի Հոռոմոց ՀՌ: ... և տիրեցին բոլոր աշխարհիս Հայոց, Պարսից, Մարաց, Պարթեաց և Պաղեստինացոց:» (Էջ 103)¹⁰⁰:

Դեպքերի և դեմքերի համադրությունը ցույց է տալիս, որ Քաղրթ/Քաղարթ իշխանը VII դարի արաբ հայտնի զորավար Խալիդ իբն ալ-Վալիդն է (585-642 թթ.): Հետևաբար ենթադրելի է, որ հայերեն Քաղրթ-ն արաբական *Խալիդ* անվան համապատասխանությունն է, ամենայն հավանականությամբ՝ մի յուրօրինակ տառադարձության արդյունքում առաջացած ձև: Այստեղ հիշատակվող Յազը, կարծում ենք, Խալիդի կողմնակից արաբ զորավար Ամր իբն ալ-Ասը պետք է լինի (արաբ. عمرو بن العاص - Amr ibn al-'Ās): Սա այն հատվածն է, որտեղ

¹⁰⁰ Մխիթար Անեցի 1983, 32 (տե՛ս առաջաբանը):

պատմվում է արաբաբյուզանդական տևական պատերազների հետևանքով արաբների կողմից Ասորիքի, Պաղեստինի և Բյուզանդիայի տիրապետության տակ գտնվող այլ շրջանների գրավման ու խալիֆայության կազմի մեջ մտցնելու մասին:

Իսլամի ծագման և Մուհամեդի գործունեության վաղ շրջանում Մեքքայի Կուրեյշ ցեղից սերող բանու Մախզում ազնվական ընտանիքը, որին պատկանում էր Խալիդը, Մուհամեդի հակառակորդներից էր և պայքարում էր նրա դեմ: Ուիուդ լեռան մոտ տեղի ունեցած հայտնի ճակատամարտում (625 թ.) նույնիսկ Խալիդն արու Սուֆիանի, Ամր իբն ալ-Ասի և մի քանի այլ զորավարների հետ՝ իր կողմնակիցներով հաղթանակ է տանում Մեդինա գաղթած մուսուլմանների նկատմամբ, որոնց առաջնորդում էր հենց իսլամի մարգարեն:

Մեքքացիների և Մուհամեդի հետևորդների միջև պատերազմներն ավարտվում են միայն մի քանի տարի անց, երբ 628 թ.-ին կնքվում է Հուդայբիայի խաղաղության դաշնագիրը: Արաբական աղբյուրներում զորավար Խալիդը տարբեր կերպ է հիշատակվում: Բուն Խալիդ անունից գատ, նա հոր անունով կոչվում է *իբն ալ-Վալիդ* (Վալիդի որդի), ավագ որդու անունով՝ *արու Սուլեյման* (Սուլեյմանի հայր)⁹: Մուսուլմանություն ընդունելուց հետո նրան տրվում է նաև «Ալլահի թուր» (Saif-ullah) պատվանունը¹⁰: Ակնհայտ է, որ արաբերենից կատարված ուղիղ տառադարձության դեպքում *Խալիդ* անունը հայերենում չպետք է նման փոփոխության

⁹ Akram 2006: chapter 2, 5.

¹⁰ Akram 2006: chapter 6, 3.

ենթարկվեր, ինչպես *Խալիլ* < արաբ. خلیل Xalil, *Խալաֆ* < արաբ. خالف Xalāf, *Խալաթ* < արաբ. خلت Xal'at¹⁰³ և այլ անձնանունների պարագայում է: Արաբերեն /خ/ - ն (x) համապատասխանում է հայերեն /խ/ - ին: Սա նշանակում է, որ անունը հայերեն է տառադարձվել միջնորդ լեզվից:

Քաղիրթ ձևով այս անունը բերված է նաև Նոր Հայկազյան բառարանում¹⁰⁴: Վերջինիս բացատրության մեջ նշված է, որ այն հատուկ անուն է, բայց չի նշվում կապը *Խալիդ* անվան հետ: Սրանից առաջացած *քաղրթալեզու*, *քաղրթաշուրթն* բարդությունները նույնպես բերված են ՆՀԲ-ում, որտեղ նշված է նայել *Քաղիրթ* անվան տակ:

Քաղիրթ հայերենում նաև հասարակ բառ է և նշանակում է «որովայն, փոր, փորոտիք, աղիք, ընդերք, թափան» , հմմտ. *Մեծ պարկ' ի փոր կենդանոյն' ճարպով պապեալ' կից ընդ աղիս' ընդունարան ապաւառի*, հմմտ. «հուն.՝ κοιλία, լատ.՝ intestinum»¹⁰⁵, (պրսկ.՝ širdān - شيردان , թրք.՝ şırdan): *Քաղիրթ* (փորոտիք) վկայվում է հիմնականում Աստվածաշնչի գրաբար տարբերակում (Ելք 29:13, 29:22, Ղեւտական 3:3, 3:9, 7:3, 8:21, 9:19), մինչդեռ ժամանակակից հայերեն թարգմանություններում փոխարինված է *փորոտիք* բառով (տե՛ս նշյալ հատվածները):

Հայերենում այդ երկու բառերի ակնհայտ նմանությունը և, հավանաբար, այն հանգամանքը, որ ՆՀԲ-ում երկուսն էլ բերված են մեկ գլխաբառի տակ՝

¹¹ Աճառյան հ. Բ, 1944, 452-453:

¹² Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի հ. II, 1981, 972:

¹³ Նույն տեղում:

առաջին և երկրորդ նշանակություններով, Բ. Կյուլեսերյանին հիմք է տվել Խալիդ անվան հայերեն *Քաղրթ* ձևը նույնացնել *քաղիրթ* (փորոտիք) բառի հետ՝ գրելով. «*Հայք, հաւանաբար, բառախաղ մը ըրած ըլլան Խալիդը հայացնելով իբրեւ Քաղիրթ, որ մեր լեզուին մէջ կը նշանակէ ընդերք, փարթ (շիրտէն, իշկէմպէ): Եւ ասպէս քաղիրթէն ալ շինեցին Քաղրթանք, Քաղրթականք (Քաղրթի ազգակիցներ, արաբք, Իսմայէլացիք) բառերը, ինչպէս նաեւ Քաղրթալեզուք, Քաղրթաշուրթն ժողովուրդ բարդերն եւ բացաբոլորութիւնները, անոնց արիւնախանձ եւ արիւնռուշտ նկարագրին համար*»¹⁰⁶: Նախ պետք է նշել, որ հատուկ անունից առաջացած այս բարդություններն իրականում արհեստականորեն ստեղծված բառեր են: «Աստվածային Գիրքը», որին հղում են «Պատմություն Վրաց»-ի հայերեն խմբագիրն ու Սամվել Անեցին, ինչպես դիպուկ կերպով ցույց է տվել Ռ. Թոմսոնը, «Սիրաքի գիրքն» է, որտեղ բարեկամների և թշնամիների մասին խոսվող գլխում, մասնավորապես, գրված է. «*Նոյնպէս թշնամի քաղցր է շրթամբք, եւ ի սրտի իրում խորհի կործանել զքեզ: Մզէ՛ զարտասուս առաջի քո, այլ թէ ժամ գտանէ՛ արեամբ քո ոչ յագի*» (ԺԲ: 15-17)¹⁰⁷: Այս տողերի խմբագրությունն է, փաստորեն, ներկայացված «Պատմություն Վրաց»-ում և Սամվել Անեցու մոտ, որտեղ *քաղցր շրթունք*-ը (քաղցրաշուրթ) բառախաղի արդյունքում դարձել է

¹⁴ Կյուլեսերյան 1930, 236:

¹⁵ Այս կապակցությամբ Բ. Կյուլեսերյանը վկայակոչում է Սուրբ Գրքի մեկ այլ հատված, հմմտ. «*Եւ կերիցէ սուր եւ յագեսցի եւ արբեսցի յարենէ նորա*» (Երեմիա Խ2: 10): Տե՛ս Կիւլէսէրեան 1930, 237:

քաղրթաշուրթ¹⁰⁸ («Պատմություն Վրաց»-ում՝ քաղրթալեզու)¹⁰⁸ քաղցր-ը փոխարինվելով քաղրթ-ով, քանի որ նախորդ նախադասության մեջ գործածված է Քաղրթ (Խալիդ) անձնանունը՝ իբրև արաբների գլխավորի անվանում։ Մեջբերված համատեքստից ակնհայտորեն երևում է, որ Քաղրթ կիրառվում է իբրև անձնանուն, և ակնարկ անգամ չկա առ այն, որ բառը գործածված է ծաղրական, հեգնական կամ արհամարհական նշանակությամբ։ Հետևաբար Քաղրթ անունը քաղիրթ (փորոտիք, որովայն) բառի հետ նույնացնելու որևէ հիմք չկա։

Այնուամենայնիվ, Բ. Կյուլեսերյանի այս մեկնաբանությունը ընդունելություն է գտել նաև այլ ուսումնասիրողների մոտ։ Սկզբում Հ. Անասյանը, Հովհաննես Կամենացու երկի հրատարակության մեջ ծանոթագրելով Քաղիրթ անունը, բառացիորեն կրկնում է վերջինիս¹⁰⁹։ Այնուհետև Հ.. Անասյանի միջոցով այս մեկնաբանությունը տարածում է գտնում Լ. Խանլարյանի և Վ. Առաքելյանի մոտ, ովքեր Կիրակոս Գանձակեցու և Առաքել Դավրիժեցու պատմությունների աշխարհաբար և ռուսերեն թարգմանությունների ծանոթագրություններում նույնությամբ կրկնում են Հ. Անասյանին՝ հղում կատարելով վերջինիս¹¹⁰։

Հետագա դարերի հայ մատենագիրներից Քաղրթի մասին հիշատակություններ հանդիպում են Վարդան Վարդապետի (XIII դ.)¹¹¹, Կիրակոս Գանձակեցու (XIII

¹⁰⁸ Thomson 1996: 250:

¹⁰⁹ Յովհաննես Կամենացի 1964, 86:

¹¹⁰ Կիրակոս Գանձակեցի 1982, ծան. 157, 304: Առաքել Դավրիժեցի 1983, ծան. 256, 552: Аракел Даврижеци 1973: прим. 9, 552.

¹¹¹ Վարդան Վարդապետ 1862, 66:

դ.)¹¹², Գրիգոր Տաթևացու (XIV-XV դդ.)¹¹³, Հովհաննես Կամենացու (XVII դ.)¹¹⁴, Գրիգոր Կամախեցու (XVII դ.)¹¹⁵, Դավիթ Բաղիշեցու (XVII դ.)¹¹⁶, Ամիրաս Երզնկացու (XVII դ.)¹¹⁷ և Առաքել Դավրիժեցու (XVII դ.)¹¹⁸ մոտ: Սամվել Անեցու օրինակին շատ մոտ է Գրիգոր Տաթևացու «Գիրք Հարցմանց»-ի «Ընդդէմ Տաճկաց» բաժնի ձեռագրերից մեկում (գրված՝ 1413 թվին) հանդիպող հետևյալ հատվածը, որ, սակայն, բացակայում է տվյալ բաժնի մյուս օրինակներում, հմնտ. «Որ եւ ութ ամօք յառաջ քան զՄահմէտ, իշխան ոմն, անուն Քաղըրդ, առաջին նստեալ գլուխ Իսմայէլացոցն, եւ զօրացեալ աւերեաց զԴամասկոս, որ է Դմշխ, եւ ելեալ ի Հայս, բազումս ի Պարսից եւ ի Հայոց ի սուր սուսերի արկ. որպէս ասէ Սուրբ Գիրն. թէ Քաղըղաշութն ժողովուրդն յագեցուցեն զսուսերս իւրեանց յարեան»¹¹⁹: Մյուս մատենագիրներից Գր. Կամախեցու, Դ. Բաղիշեցու և Ամ. Երզնկացու ժամանակագրություններն իբրև աղբյուր են ծառայել Առաքել Դավրիժեցու «Պատմության» համար¹²⁰, ուստի նրանցում հանդիպող տեղեկությունները գրեթե բառացի կրկնում են միմյանց: Եթե ավելի վաղ աղբյուրներից մեզ ծանոթ չլիներ

²⁰ Կիրակոս Գանձակեցի 1961, 58:

²¹ Կյուլեսերյան 1930, ծան. 3, 121:

²² Յովհաննէս Կամենացի 1964, 38:

²³ Մանր ժամանակագրություններ հ. II, 1956, 263:

²⁴ Մանր ժամանակագրություններ հ. II, 1956, 330, 331:

²⁵ Խանլարյան 1988, 189:

²⁶ Առաքել Դավրիժեցի 1990, 467:

²⁷ Կյուլեսերյան 1930, ծան. 3, 121:

²⁸ Առաքել Դավրիժեցի 1990, ծան. 455, 534-535: Խանլարյան 1988, 189:

«քաղղթաշուրթ ժողովուրդ» արտահայտությունը, ապա գուցե նաև անհեթեթ ու անբացատրելի թվար վերոնշյալ աղբյուրներում առկա հետևյալ հատվածը, հմմտ. «Թուին ԾԲ. Քաղղայ շրթունքն էր գլուխ իսմայելացոց» (Գր. Կամախեցի, էջ 263, Ամ. Երզնկացի, էջ 189, Առ. Դավրիժեցի, էջ 467), որտեղ Քաղղ. և շրթունք բառերի կապակցումը անհասկանալի ու ավելորդ պիտի թվար: Եվ ահա այդպիսի մի թյուրիմացություն էլ, ի դեպ, առաջացել է Առաքել Դավրիժեցու «Պատմության» ռուսերեն թարգմանության մեջ, որտեղ Լ. Խանլարյանը, առանց խորամուխ լինելու այդ բառերի կապի մեջ, նշյալ կապակցությունը չի թարգմանում, այլ բառացի տառադարձում է ռուսերեն, հմմտ. «В 52 (603) году главою измайльтян был Кахурда-артуник»¹²¹: Մինչդեռ, եթե այս հատվածը համեմատվեր վաղ շրջանի աղբյուրներում առկա օրինակների հետ, ապա ակնհայտ կլիներ, որ շրթունք բառը հանգում է աստվածաշնչյան տողերին և հատուկ անուն չէ, ուստի ռուսերեն տարբերակում գուցե պետք է ներկայացվեր թարգմանությամբ և ծանոթագրվեր: Հետևաբար անվիճելի է, որ ուշ շրջանի այս բոլոր աղբյուրները պիտի բացատրվեն Սամվել Անեցու օրինակի հետ համեմատությամբ, քանի որ հանգում են վերջինիս: Այդպիսի մի ժամանակագրություն է պարունակում նաև Երուսաղեմի Ս. Հակոբյանց Մատենադարանի № 3701 ձեռագիրը, որը շատ ընդհանրություններ ունի Առաքել Դավրիժեցու և Ամիրաս Երզնկացու ժամանակագրությունների հետ¹²²: Այդ

²⁹ Аракел Даврижеци 1973: 475.

³⁰ Խանլարյան 1984, 85-86:

Ժամանակագրությունը հատվածաբար հրատարակել է Ն. Եպս. Պողարյանը¹²³: Նախաբանում հրատարակիչը նշում է, որ ձեռագրի սկիզբը պակասավոր է, և բացակայում են առաջին երեք պրակները՝ յուրաքանչյուրը հավանաբար 12 թերթից բաղկացած, հետևաբար Ժամանակագրությունը սկսվում է Դ գլխից, որից ընդամենը չորս թերթ է մնացել: Ն. Պողարյանը նշում է նաև, որ ձեռագիրն իր նախնական մասերում նման է Սամվել Անեցու «Ժամանակագրության»-ը ապա ունի նմանություններ Սամվել Անեցու «Ժամանակագրության» տարբեր շարունակությունների հետ¹²⁴: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Քաղրթ անվանը վերաբերող մեզ հետաքրքրող հատվածը հենց սկզբում պետք է եղած լիներ, ապա պիտի ենթադրել, որ այդ հատվածը մնացել է ձեռագրի փչացած և կորած էջերում:

Քանի որ Քաղրթի մասին պատմող դրվագը վերաբերում է իսլամի վաղ շրջանի և Մուհամեդի ի հայտ գալու մասին պատմությանը, ուստի ենթադրելի էր, որ այդ անվան մասին տեղեկություններ պետք էր որոնել նաև XII դարին նախորդող պատմիչների մոտ: Թեև Մուհամեդի և իսլամի տարածման վերաբերյալ տեղեկություններ հայ մատենագրության մեջ հայտնվում են՝ սկսած VII դարից, սակայն Քաղրթի մասին հիշատակություն չկա ո՛չ Սեբեոսի, ո՛չ էլ մինչև XII դարն ընկած ժամանակաշրջանի որևէ պատմիչի մոտ¹²⁵:

³¹ Պողարյան 1969, 257-282:

³² Պողարյան 1969, 257:

³³ Քաղրթի մասին տեղեկություններ չի գտնում նաև «Պատմություն Վրաց»-ի ֆրանսերեն թարգմանիչ Մ. Բրոսսեն՝ նշելով միայն, որ արաբալեզու պատմիչ Աբու-լ Ֆիդայի մոտ (XIII-XIV դդ.)

Ն. Ակինյանը, խոսելով Ղևոնդի «Պատմության» մասին, կարծում է, որ գիրքը կորուստ ունի սկզբից, իբրև թե պակասում է գրքի ընծայականն՝ ուղղված Շապուի Բագրատունուն և մեկ գլուխ՝ նվիրված «Մահմետի երևման»¹²⁶: Իբրև փաստարկ՝ նա բերում է Մխիթար Անեցու տողերն արաբական արշավանքների մասին, այդ թվում՝ Քաղրթին վերաբերող հատվածը, որ, սակայն, բացակայում է Ղևոնդի մոտ: Թեև նա հակված է Քաղրթին վերաբերող հատվածը համարել Ղևոնդի կորած առաջաբանի մաս, սակայն ընդունում է, որ Մխիթարի առաջաբերությունն այնքան երկիմաստ ձևով է, որ դժվար է դրա վրա հիմնվելով՝ հանգել որոշ եզրակացության ի նպաստ Ղևոնդի¹²⁷: Ըստ նրա, Անեցու մոտ Քաղրթի և Եմրանի հիշատակությունը ենթադրում են ուրիշ աղբյուր: Այս կապակցությամբ Ն. Ադոնցը ճիշտ կերպով նշում է, որ «Մխիթարը առել է խորթ անուններն իր հայրենակից Սամուել Անեցուց, որի մոտ նույն անունները հնչում են Քաղրթ կամ Քաղարթ և Ամրան: Սրանք ոչ այլ ոք են, եթե ոչ Մահմեդի անդրանիկ զորավարները՝ Խալիդ և Ամր (Օմար): Անունների խորթ փառադարձությունը մատնում է ասորական աղբյուր»¹²⁸:

Հայտնի չէ ասորական այն աղբյուրը, որից կատարվել է Քաղրթին վերաբերող այս հատվածի թարգմանությունը, սակայն այն, որ անձնանվան հայերեն *Քաղրթ/Քաղարթ/Քաղիրթ* ձևը ասորերեն

հիշատակություն կա խազրաջների մասին՝ հավանաբար ակնարկելով Քաղրթ և խազրաջ անունների նմանությունը՝ Brosset 1851: 49.

¹²⁴ Ակինյան 1930, 51:

¹²⁵ Ակինյան 1930, 49:

¹²⁶ Ադոնց 2006, 327:

𐌀𐌆¹²⁹ (Kāled) անվան տառադարձությունն է, կասկածի տեղիք չի թողնում, երբ երկու լեզուներում անվանական այս ձևերի համապատասխանությունը համեմատության մեջ ենք դնում հայերենում համանուն այլ բառերի և դրանց ասորական համարժեքների հետ: Ստորև բերվող ձևերի համեմատությունը ակնհայտ է դարձնում ասորերենից հայերենին անցած մի շարք բառերում տառադարձության միևնույն սկզբունքի օրինաչափ կիրառությունը: Այսպես, հայերենում անձնանուն և «փորոտիք» նշանակությամբ հասարակ բառ լինելուց զատ, *Քաղիրթ* նաև գետանուն է: Այդպես է կոչվում Տիգրիսի ձախակողմյան վտակը, որ այժմ հայտնի է Բաթմանսու անվամբ և հոսում է ներկայիս Թուրքիայի Հանրապետության տարածքով: Սկսած 387 թվից՝ Պարսկաստանի և Բյուզանդիայի սահմանն անցնում էր այս գետով: *Քաղիրթ* գետանունը վկայվում է «Աշխարհացոյց»-ում Աղծնիքի նկարագրության մեջ, հմմտ. «*Աղծնիք յելից կայ Միջագետաց, եւ հիւսիսեալ առ Դկղաթով, ունի գաւառս Կասն. զՆփոեդ, զԱղծն, ընդ որոց մէջն իջանէ գետն Քաղիրթ, զոր Շիթմա կոչեն Տաճիկք, այսինքն՝ արինարբու...*»¹³⁰: Գետի այլ անվանումներ են *Բեշրկու գետ, Սասնո գետ, Նիկեփորիոս, Նիմփիոս, արաբերեն՝ Շիթմա, Շիթիթմա*¹³¹, որ թարգմանաբար նշանակում է «Արյան գետ» (արաբ. شط الدم – Šaṭ al-dam): Գետի ասորական անվանումն է 𐌕𐌌 (Kalaθ, Քալաթ կամ Քալեթ)¹³² : Այս

¹²⁹ Gregorii Barhebraei 1890: 101.

¹³⁰ Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ Յանւոածովք նախնեաց 2003, 2152: Հիւքման 1907, 159-160:

¹³¹ Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան 1986, հ. 1, 549:

¹³² John of Ephesus 1853: 416; John Bishop of Ephesus 1860: 447.

կապակցությամբ Հ. Հյուբշմանը նշում է, որ գետանվան *Քաղիրթ* ձևը դժվար թե առաջացած լինի *քաղիրթ* «փորոտիք, աղիք» բառից և հարցնում՝ արդյո՞ք բառն առհասարակ հայկական ծագում ունի¹³³: Այն, որ գետանվան հայերեն *Քաղիրթ* ձևը տառադարձություն է ասորերենից, երևում է Աղձնիքի նկարագրության մեջ գործածված մի շարք ասորական անվանաձևերից: «Աշխարհացույց»-ի հեղինակը այս հատվածը շարադրելիս, բացի Պտղոմեոսի «Աշխարհագրություն»-ից, հիմնվել է նաև սեմական աղբյուրների վրա: Այստեղ հիշատակվող տեղանունների մեջ քիչ չեն ասորական ձևերը, հմմտ. նույն Տիգրիս գետի ասորական Deqlaθ > հյ. Դկղաթ անվանումը և այլն¹³⁴: Բացի այդ, ասորերեն *Քալեդ* անձնանունն ու *Քալաթ* գետանունը ներկայացնում են բաղաձայնական գրեթե նույն հնչյունախումբը. մի դեպքում /p/, /l/, /r/, մյուս դեպքում /p/, /l/, /r/: Պետք է նկատի ունենալ, որ այս պարագայում ձայնավորների առկայության հանգամանքը գրեթե որոշիչ դերակատարություն չունի, քանի որ ասորերենի, ինչպես և սեմական մյուս լեզուների համար գործածական է բաղաձայնական գիրը: Նշված երկու դեպքում էլ ասորերենում գրությամբ մոտ և բաղաձայնական միանման հնչյունախումբ ունեցող բառերի դիմաց հայերենում ունենք տառադարձության միևնույն սկզբունքի կիրառմամբ համանուն բառեր: Ասորական կոկորդային /~/- (քաֆ) տառով նշվում է երկու բաղաձայն՝ պայթական /p/ և շփական /t/: Բառասկզբում, ինչպես նաև բառամիջում՝ բաղաձայնից

⁴¹ Հյուբշման 1907, 420:

⁴² Հյուբշման 1907, ծան. 1, 76-77:

հետո այն հնչում է որպես /p/¹³⁵, հմմտ. հյ. քեղեղին «պսակ» < ասոր. kəṣlā¹³⁶: Այստեղ կարծես թե անբացատրելի է մնում վերջին բաղաձայնից առաջ հավելյալ /r/-ի առկայությունը հայերենում, բայց այս շարքը չի սահմանափակվում միայն վերոնշյալ դեպքերով և լրացվում է ասորերենից հայերենին անցած մեկ այլ փոխառությամբ, հմմտ. *խլուրդ* < ասոր. ܚܠܕܐ (xulda)¹³⁷, արաբ. ܚܠܕ (xulud) բառը: Ինչպես տեսնում ենք, տվյալ պարագայում նույնպես ասորերեն համապատասխան ձևի դիմաց հայերենում առկա է վերջին բաղաձայնից առաջ հավելյալ /r/ հնչյուն: Հ. Աճառյանն այս կապակցությամբ նշում է, որ այս ձևերը չեն կարող տալ հյ. *խլուրդ*, որի մեջ /r/ ձայնի համապատասխանը չկա: Հավանական է համարվում բառի՝ ասորի գավառական մի ձևից առաջացած լինելը, որ ավանդված չէ, բայց որի գոյության իբրև ապացույց կարող է ծառայել ասոր. xaldūdā («դաշտային մուկ») բառը¹³⁸: Այնուամենայնիվ պետք է նշել, որ վերջին տարբերակում նույնպես /r/ հնչյուն չկա: Մինչդեռ նախորդ օրինակների համեմատությունը *խլուրդ* բառի հետ լրացնում է այդ բացը և ի ցույց դնում ասորերենից հայերենին անցած փոխառություններում այս անկանոնության օրինաչափությունը: Ինչ վերաբերում է *քաղիրթ* «փորոտիք» բառի ստուգաբանությանը, ապա Ս. Դերվիշյանն այն կցում է հուն. χολ(θ)ς և լատ. hira, hilla «փորոտիք» բառերին՝ *-իրդ* կամ *-իրթ* մասնիկով¹³⁹:

¹³⁵ Հակոբյան 2005, 57:

¹³⁶ Աճառյան 1979, հ. Դ, 569:

¹³⁷ Հյուբշման 1907, 305:

¹³⁸ Աճառյան 1973, հ. Բ, 374:

¹³⁹ Աճառյան 1979, հ. Դ, 544: Dervischjan 1877: 78.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հունարեն $\chi\omicron\lambda\acute{\alpha}(\theta)$ -ն ունի բաղաձայնական գրեթե նույն հնչյունախումբն, ինչ Kaled և Kala θ անունները ապա կարելի է ենթադրել, որ հունարեն այս բառը ևս հայերենին է անցել ասորերենի միջոցով՝ հավանաբար Աստվածաշնչի թարգմանության վաղ փուլում: Սա շատ հավանական է թվում, քանի որ «Աստվածաշնչի» առաջին թարգմանությունները հայերեն կատարվել են ասորական և հունական բնագրերի համեմատությամբ: Փաստորեն, հայերենում համանուն երեք *Քաղիրթ*-ներից երկուսի (անձնանվան և գետանվան) պարագայում առկա են ասորական միանման գրությամբ համապատասխան ձևերը, իսկ երրորդի (փորոտիք) դեպքում առկա է հունարեն համարժեքը, որ ներկայացնում է նույն հնչյունախումբն ինչ ասորականներին: Այս երեք բառերում հայերենում վերջին բաղաձայնից առաջ հավելյալ /ր/-ն էլ լրացվում է ասորերենից հայերեն կատարված մեկ այլ փոխառությամբ (*խլուրդ*՝ տե՛ս ստորի աղյուսակները):

1. Հայերեն և ասորերեն բառերի համապատասխանությունների աղյուսակ.

Հայերեն	Ասորերեն	Հունարեն
Քաղըրդ/Քաղիրթ (անձնանուն)	𐤒𐤕(Kaled)	
Քաղիրթ (գետանուն)	𐤒𐤕𐤔(Kala θ)	
Քաղիրթ (փորոտիք)	-	$\chi\omicron\lambda\acute{\alpha}(\theta)$
Խլուրդ	𐤕𐤕𐤁𐤁(xūldā)	

2. Տառերի համապատասխանությունների աղյուսակ

Ատրերեն	Հայերեն
𐎧 (k, x)	ք (k')
𐎡 (l)	ղ (t)
𐎠 (d)	դ (d)
𐎢 (t, θ)	թ (t')
𐎪 (x)	խ (x)

Ինչպես պարզ է դառնում վերոշարադրյալից, հայ մատենագրության մեջ (սկսած՝ XII դարից) արաբների վերաբերյալ կիրառված *Քաղրթականք* անվանումը անձնանվանահիմք կազմություն է՝ առաջացած *Քաղրթ/Քաղարթ/Քաղիրթ* անձնանվանը (Խալիդ, անվան ասորական ազդեցությամբ տառադարձված ձևը հայերենում) պատկանելություն ցույց տվող *-ական* վերջածանցի և *-ք* հոգնակիակերտ մասնիկի հավելմամբ: Սկզբնաղբյուրի հաղորդման համաձայն՝ այս անունը ոչ թե արաբների հիմնական անվանումներից էր, այլ «ներանք այդպես կոչվեցին մի որոշ ժամանակ»՝ ըստ էության նկատի ունենալով Խալիդ իբն ալ-Վալիդ զորավարի գլխավորությամբ արաբական հաղթական արշավանքների սկզբնական ժամանակաշրջանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբուլաձե Ի. 1941, «Քարթլիս Յիսուրեբայի կամ Վրաց Պատմության հին հայերեն թարգմանությունը», Մատենադարան, Գիտական նյութերի ժողովածու, 1, Երևան, էջ 31-40:

- Ադոնց Ն. 2006**, Ղետնդ եւ Խորենացի (Քննություն հայր Ն. Ակինյանի տեսության), Երկեր, հ. Բ, Երևան, էջ 323-351:
- Ակինյան Ն. 1930**, Մատենագրական հետազոտություններ, հ. Գ, Վիեննա:
- Աճառյան Հ. 1973**, Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Երևան:
- Աճառյան Հ. 1979**, Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Երևան:
- Աճառյան Հ. 1944**, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երևան:
- Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ Յաւելուածովք նախնեաց 2003**, Մատենագիրք Հայոց, հ. Բ, Անթիլիաս, էջ 2123-2161:
- Առաքել Դավրիժեցի 1990**, Գիրք Պատմութեանց, Երևան:
- Առաքել Դավրիժեցի 1983**, Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վ. Առաքելյանի, Երևան:
- Մանր ժամանակագրություններ 1956**, XIII-XVIII դդ., հ. II, Երևան:
- Խանլարյան Լ. 1988**, Ամիրաս Երզնկացու ժամանակագրությունը, Պատմա-բանասիրական հանդես, 4 (123), Երևան, էջ 188-208:
- Խանլարյան Լ. 1984**, Առաքել Դավրիժեցու աղբյուրներից մեկը, Պատմա-բանասիրական հանդես, 2 (105), Երևան, էջ 82-86:
- Կիրակոս Գանձակեցի 1982**, Հայոց պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վ. Առաքելյանի, Երևան:
- Կիրակոս Գանձակեցի 1961**, Պատմություն Հայոց, Երևան:
- Կիլիսեւեան Բ. 1930**, Իսլամը հայ մատենագրութեան մեջ, Վիեննա:
- Հակոբյան Ա. 2005**, Դասական ասորերեն, Երևան:

- Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ. 1986,**
Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների
բառարան, հ. 1, Երևան:
- Համառոտ Պատմութիւն Վրաց ընծայեալ Ջուանշերի
պատմչի 1884,** Վենետիկ:
- Հիւքշման Հ. 1907,** Հին Հայոց տեղւոյ անունները, Վիեննա:
- Մխիթար Անեցի 1983,** Մատեան աշխարհավէպ
հանդիսարանաց, Երևան:
- Յովհաննէս Կամենացի 1964,** Պատմութիւն պատերազմին
Խոթինու, Երևան:
- Նոր Բաղդիրք Հայկազեան Լեզուի, հ. II, 1981,** Երևան:
- Պողարյան Ն. 1969,** Ժամանակագրություն (XI-XVIII դդ.),
Բանբեր Մատենադարանի, 9, Երևան, էջ 257-282:
- Սամուէլ Անեցի 2011,** Հաւաքմունք ի գրոց պատմագրաց
յաղագս Գիտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս
ծայրաքաղ արարեալ, Երևան:
- Վարդան Վարդապետ 1862,** Հաւաքումն պատմութեան,
Վենետիկ:
- Аракел Даврижеци 1973,** Книга историй, перевод с армянского,
предисловие и комментарий Л. А. Ханларян, Москва.
- Akram A. I. 2006,** The Sword of Allah: Khalid bin al-Waleed, His
Life and Campaigns, India,
[https://archive.org/details/KhalidBinAl-
waleedSwordOfAllah.pdf/page/n12/mode/1up](https://archive.org/details/KhalidBinAl-waleedSwordOfAllah.pdf/page/n12/mode/1up)
- Gregorii Barhebraei 1890,** Chronicon Syriacum, ed. P. Bedjan, Paris.
- John of Ephesus 1853,** The Third Part of The Ecclesiastical History,
Oxford.
- The Third Part of The Ecclesiastical History of John Bishop of
Ephesus 1860,** transl. by S. Payne, Oxford.
- Thomson R. S. 1996,** Rewriting Caucasian History, Oxford.
- Brosset M. 1851,** L'histoire de la Ge'orgie, St.-Pe'tersbourg.
- Dervischjan S. 1877,** Das Altarmenische, Wien.

Հայկազ Գևորգյան, ք.գ.թ., Մաշտոցի անվան հին
ծեռագրերի ինստիտուտ (Մալոնադարան)
Արևելագիտության բաժին, ավագ գիտաշխատող
haykaz1605@gmail.com

K'ALRT'AKANK' - ATTESTATION OF ONE ETHNONYM REFERRING TO THE ARABS IN THE ARMENIAN HISTORIOGRAPHY

Keywords: *K'alrt'akank', Kalirt, ethnonym, Arab, Armenian historiography, Khalid, anthroponym.*

The Armenian ethnonym *K'alrt'akank'* (arm. Բաղրթականք) referring to the Arabs is attested only in the historical context which contains the narration about the rise of Islam and Muhammad. The fact that the same context is encountered in different works of Armenian chroniclers, suggests that there is an ultimate common source. The first evidence of this name in the Armenian bibliography refer to two historical works of the XII century (Ancient Armenian translation of "The History of Georgians" and "Chronology" by Samuel of Ani).

Historico-philological examination shows that the first component of the name *K'alrt'akank'* (*K'alrt'*, *K'alirt* or *K'alart'*) is identical with the Arabic anthroponym *Khalid*.

In this article, based on source study and comparison of the name *K'alirt* with other Armenian words with the same pronunciation and same orthography, the correspondence of Arabic *Khalid* < Arm. *K'alirt* is represented. It is a result of a unique transliteration from Syriac into Armenian. Accordingly, the Arabic name *Khalid* entered into Armenian probably in the XII century from a currently unknown Syriac source.

Haykaz Gevorgyan - PhD,
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
(Matenadaran), Department of Oriental Studies
haykaz1605@gmail.com